# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իշխան Կարապետյանի՝ Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ

| | | |
|---|---|---|
| 1. | Անունը, Ազգանունը | Իշխան Կարապետյան |
| 2. | Զբաղեցրած պաշտոնը | ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ |
| 3. | Գործուղման վայրը և ժամկետները | Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) 2017 թվականի սեպտեմբերի 21-23-ը ներառյալ |
| 4. | Հրավիրող կողմը | Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) անդամ պետությունների կարանտին բույսերի ոլորտում համակարգման խորհուրդ և Ռուսաստանի Դաշնության անասնաբուժության և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայություն |
| 5. | Գործուղման նպատակը, աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը | ԱՊՀ անդամ պետությունների կարանտին բույսերի ոլորտում համակարգման խորհրդի 6-րդ նիստին մասնակցելու, Եվրասիական տնտեսական միությունում կարանտին բուսասանիտարական միջոցառումների, ԱՊՀ անդամ պետություններում կարանտինային օբյեկտների միասնական ցանկի, 2016-2017 թվականներին ԱՊՀ անդամ պետությունների տարածքում բուսասանիտարական իրավիճակի հետ կապված, ինչպես նաև օրակարգային այլ հարցեր քննարկելու նպատակով և հանդիպելու Ռուսաստանի Դաշնության անասնաբուժության և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալի հետ |
| 6. | Քննարկված թեմաները | 1. ԱՊՀ անդամ պետությունների կարանտին բույսերի ոլորտում համակարգման խորհրդի 6-րդ նիստի օրակարգը<br>2. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» համաձայնագրի իրականացումը<br>3. Հայաստանի Հանրապետության տարածքում դաբաղի իրավիճակի վերաբերյալ |

| | | |
|---|---|---|
| 7. | Հանդիպումները, ելույթները, բարձրացված քննարկված հարցերը | 1. 2012-2016 թվականներին ԱՊՀ անդամ պետությունների կարանտին բույսերի ոլորտում համակարգման խորհրդի գործունեության մասին հաշվետվության վերաբերյալ<br>2. ԱՊՀ անդամ պետությունների կարանտին բույսերի ոլորտում համակարգման խորհրդի ղեկավարի ընտրությունները<br>3. Կարանտին բույսերի ոլորտում Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայության աշխատանքների մասին<br>4. 2016-2017 թվականներին ԱՊՀ անդամ պետությունների տարածքներում կարանտին բուսասանիտարական իրավիճակի մասին<br>5. 2016-2017 թվականներին Ռուսաստանի Դաշնությունում բուսասանիտարական իրավիճակը<br>6. Եվրասիական տնտեսական միությունում կարանտին բուսասանիտարական միջոցառումները<br>7. ԱՊՀ անդամ պետություններում կարանտինային օբյեկտների միասնական ցանկի ստեղծման մասին<br>8. 2017 թվականի հունիսի 23-ի ԱՊՀ տնտեսական խորհրդի որոշման մասին<br>9. Օրգանական գյուղատնտեսությունում բույսերի պաշտպանության կենսաբանական մեթոդ և այդ ոլորտում ԱՊՀ երկրների համագործակցության հեռանկարները<br>10. ԱՊՀ իրավապայմանագրային դաշտի գույքագրման մասին<br>11. Համակարգման խորհրդում ԵՏՀ դիտորդի կարգավիճակը հաստատելու մասին<br>12. Խորհրդի հերթական նիստի օրակարգի նախագծի հարցերի քննարկում վերաբերյալ<br>13. Խորհրդի հերթական հանդիպման անցկացման վայրի և ամսաթվի մասին<br>14. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» համաձայնագրի իրականացումը |

| | | |
|---|---|---|
| | | 15. Հայաստանի Հանրապետության տարածքում դաբաղի իրավիճակի վերաբերյալ |
| 8. | Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը | Հանդիպման ընթացքում որոշվեց՝<br>1. Համակարգման խորհրդի նախագահությունը փոխանցել Ռուսաստանի Դաշնությանը,<br>2. Հետաձգել «ԱՊՀ անդամ պետություններում կարանտինային օբյեկտների միասնական ցանկի ստեղծման մասին» հարցը<br>3. Մինչև տարեվերջ ներկայացնել 2018 թվականի համար ուսումնական ծրագրերի ժամանակացույց<br>4. Որոշվեց հաստատել Համակարգման խորհրդում ԵՏՀ դիտորդի կարգավիճակը<br>5. Որոշվեց մինչև սույն թվականի նոյեմբերի 1-ը հավաքագրել Համակարգման խորհրդի հերթական նիստում ընդգրկվելիք հարցերի շրջանակը<br>6. Որոշվեց դիմել Տաջիկական կողմին՝ Համակարգման խորհրդի հերթական նիստը իրենց մոտ անցկացնելու նպատակով |
| 9. | Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, ակնկալվող արդյունքները | |
| 10. | Գործուղվողը | Իշխան Կարապետյան |
| 11. | Ստորագրությունը, ամսաթիվը | 27.09.2017 թ. |